Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10- րդ դասարան Ժամանակը՝ 180 րոպե

Արշալույսի շքեղահ-ս ծիրանու ներքո երևաց գրեթե հազար տարի միայնության մեջ ապրող գո-տրիկ կղզին իր ժայռակո- լեռնապարով վայրի բուսականությամբ: Տիեզերական անվերջություն հիշեցնող օվկիանոսի խորքում նրա հա-ելանման ***մակերեսին*** կղզյակն ասես չհ-կված ***զմրու-տ*** է արևից փայլող որ-աքարե ***շրջանակով*** գոտ-որված:

Թվում է ջրում ընկղմված կղզին ա-բասիր գեղեցկությամբ ծե-ծե-ուն մի պճնամոլ է ***որ*** գիտակցելով իր դ-խոյական ***վեհությունը*** հանդուգն հայացքով է նայում իրեն սիրահարված տրտմաշու- օվկիանոսի հեղ-եղուկ ***ալիքներին*** որոնք մերթ մեղմ ***խշշյունով*** անարգել մոտենում գ-վում են ***իրենց*** տիրուհու քղանցքներին մերթ դժկամությամբ հետ քաշվելով հառաչում:

Լուս-նկա գիշերներին երբ լռում է թռչունների հոգեպարար դայլայլը և լսվում են միայն ալիքների անդո-ություն պարգևող միալար ճռ-փյունները ներդաշնակորեն միահյուսված զեփյուռի մեղմ շն-շն-ոցին կղզին նմանվում է վեղարավոր ապաշխար-ողի ծնկաչոք աղոթող: Շուտով սակայն ականակի- մութը սկսում է տեղի (տալ) հետզհետե տա-ալուծվելով ու ***անհետացած*** հեքիաթային խա-կանքին փոխարինում են լուսառատ ու շենշող պատկերները:

Կղզու հարավ(արևելքում) ուղղակի մեր դիտակետին դեմ (հանդիման) աղոտ գծագրվում է երկու(հազար)ամյա բերդ(ամրոցը) վաղուց (ի) վեր փլատակված միջնաբերդով կառուցված պերճ Արևելքին բնորոշ խայտաբղետ ***աղյուսներով*** ու քառակուսի պատուհաններով:

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը և փակագծերում տրված բաղադրիչը հանելով՝ բառերը գրի՛ր անջատ, միասին կամ գծիկով: (5 միավոր)
2. Կետադրի՛ր համր բնագիրը: (5 միավոր)
3. Բնագրից դո՛ւրս գրիր ***սոսափյուն, գեղգեղանք, ցնորք, հավակնոտ, դյուրափոփոխ, պչրասեր, փարվել, պճնասեր, ընկրկել, պայծառ*** բառերին համապատասխանող հոմանիշները: (5 միավոր)
4. Բնագրից դո՛ւրս գրիր 5 բառ, որոնք համանուն զույգեր ունեն (ընդհանուր 10 բառ) և յուրաքանչյուրի կողքին նշի՛ր խոսքի մասը և բառիմաստը: (5 միավոր)
5. Բնագրից դո՛ւրս գրիր բարդածանցավոր 10 բառ և յուրաքանչյուր բառի տակ ընդգծի՛ր ածանցը: (5 միավոր)
6. Բացատրի՛ր տրված հարանուն բառերի իմաստները և յուրաքանչյուր բառով կազմի՛ր բառակապակցություն. ***ապիկար-ապիրատ, աշտանակ-աշտարակ, հովատակ-հրովարտակ, ակութ-անութ, աստանդական-ասպնջական*** : (5 միավոր)
7. Նշի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (5 միավոր)
8. Կազմի՛ր 10 դարձվածք ***կյանք*** բառի տարբեր բառաձևերով և մեկնաբանի՛ր: (5 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Քո պատգամը հղի՛ր աշխարհին» վերնագրով (երկու էջի սահմաններում): (10 միավոր)